IDBank

№ Ա - 5 - 1509

20 05 2026թ

ԵՐԱՇԽԻՔ

(որակավորման ապահովում)

1. Սույն բանկային երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/ԱԽ-39-1 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԷՎԱՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/ԱԽ-39-1 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 6,000,000 (վեց միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000698 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/ԱԽ-39-1 ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2027թ. մայիսի 31-ին հաջորդող իններորդ աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան 29.10.2027թ. ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ gnumner@mia.gov.am էլեկտրոնային հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/ԱԽ-39-1 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրինության
վարկային հաճախորդների հետ
համագործակցության վարչության ղեկավար — **Հաբեթ Վելիկյան**

Գլխավոր հաշվապահի տեղակալ / Հաշվապահական հաշվառման
և հաշվետվությունների վարչության ղեկավար — **Անուշ Հովհաննիսյան**

Կատարող՝ Ա.Ղազարյան

G.Kanjyan

Digitally signed by G.Kanjyan
Date: 2026.05.20 10:23:18 +04'00'